ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինոդը՝ համաձայն Նորին Սրբութեան այս տարուայ օգոստոսի 26-ի, № 1238 կոնդակի, որոշեց. Եգիպտոսի Հայոց Միացեալ Բարեգործական ընկերութեան Երևանի աղէտեալների օգտին փոխադրած երեք հազար ռուբլուց տալ Երևանի կոնսիստորիայի միջոցով 1000 ռուբլի Օշականի եկեղեց. ծխական դպրոցի շինարարական հոգաբարձութեան, իսկ մի-մի հազարական ռուբլի Աշտարակի շինուելիք դպրոցի և Փարպի գիւղի կառուցուելիք եկեղեցու օգտին այն դէպքում, երբ յիշեալ գիւղերում կընտրուեն յատուկ հոգաբարձութիւններ և հիմք կդրուի այդ շինութեանց։ 1 սեպտ. թ. 430։

Սինոդը՝ Գանձակի նահանգական դատարանից ստանալով Շուշեցի Թէոդորոս Մաշիեանցի հաստատուած կտակի քաղուածը, որով զանազան գումարներ են նուիրուած ազգային հոգևոր դպրոցական հաստատութեանց, որոշեց. Ուղարկելով Ղարաբաղի կոնսիստորիայի միջոցով կտակի քաղուածի պատճէնը, պատուիրել թեմի ժամ. կառավարչին և հոգևոր դպրոցական հաստատութեանց, հսկել կտակի իրագործմանը և հետամուտ լինել ստանալու կտակադրամները։ Կտակի Դ. կէտում որոշուած են հետևեալ նուէրները. Շուշու թեմական դպրոցին, Մարիամեան դպրոցին, Ժամհարեան հիւանդանոցին, Բարեգործական ընկերութեան ճիւղին, Կուսանաց վանքին (եթէ կտակարարի և կնոջ մարմինները կըթաղեն նոյն վանքում, հակառակ դէպքում Մեղրեցոց եկեղեցուն) մի-մի հազարական ռուբլի, այլ մանր գումարներ միւս հաստատութիւններին։ Հինգերորդ կէտում որոշուած է մնացած գումարի և արժեթղթերի տոկոսներով բանալ արհեստագիտական կամ գիւղատնտեսական դպրոց կտակարարի և կնոջ անուանը։ 5 սեպտեմբ. թ. 445։

Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի պատուիրանի, որոշեց. Շրջաբերականով պատուիրել Հայոց թե-

մակալ առաջնորդներին կարգադրել, որ թեմերի բոլոր եկեղեցիներում կիւրակէ օրերը գանձանակ շրջեցնեն պատերազմում վիրաւորուած և հիւանդ զինուորների օգտին։ 5 սեպտեմբ. թ. 446։

Սինոդը որոշեց. Ի նկատի ունենալով, որ Բագուեցի բարեյիշատակ Կառարինէ Մայիլեանի 1911 թ. հաստատուած կտակով ս. Էջմիածնի և Երուսաղէմի վանքերին նուիրուած 500-ական ռուբլին և Շամախու հայոց ծխական դպրոցին նուիրած 300 ռուբլին արդէն ստացուած են, իսկ Լենքորանի դպրոցին որոշած 300 և եկեղեցուն նուիրած 200 ռուբլու ստացման համար պատշաճ կարգադրութիւն արդէն արուած է, կարճել այդ գործը Սինոդում։ 10 սեպտ., թ. 450։

Սինոդը՝ լսելով Թելաւի գաւ. Ռուիսպեր գիւղի երեցփոխի բողոքը Վրաստանի կոնսիստորիայի կարգադրութեան դէմ, որով պատուիրուած է 1913 թ. ժողովուած կալահացի կէսը տալ գիւղի նախկին ժամանակաւոր հովուին, իսկ միւս մասը՝ նորընծայ քահանային, որոշեց. Օրինաւոր ճանաչել կոնսիստորիայի որոշումը և պատուիրել յանդիմանել Ռուիսպերի գիւղի եկեղեցու երեցփոխանին, պատուիրելով այսուհետև իրեն չվերաբերող գործերին չխառնուել։

Սինոդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, իւր Ատեանում վերստին քննութեան ենթարկելով Երևանի գաւ. Բաշքենդ գիւղի բնակիչ Արամ Տէր Յակովբեանին, որ ցոյց տուեց անբաւարար դիւտութիւն, որոշեց. Ի նկատի ունենալով ընծայացուի անպատրաստ լինելը, մերժել կոնսիստորիայի միջնորդութիւնը Տէր Յակովբեանին Բաշքենդ գիւղի համար քահանայ ձեռնադրելու վերաբերմամբ։ 12 սեպտ. թ. 461։

Սինոդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. Հոգևոր կոչման մէջ ընդունել Ներքին-Ղամարլու գիւղի բնակիչ Արշակ Տէր Իսրայէլեանին և պատուիրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի համար։ 12 սեպտեմբ. թ. 462։

Սինոդը՝ լսելով Ղաղաբաղի կոնսիստորիայի միջնորդութիւնը Կախ-աւանի Մելքիսեդեկ քահանայ Սլդրեանին նոյն տեղի հովուութիւնից ազատ կացուցանելու և նրա տեղ ուսուցիչ Արտաշէս Տէր Յովսէփեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. Կոնսիստորիայի առաջ բերած առարկութիւնները Սլդրեան քահանային Վարդաշէն տեղափոխելու վերաբերեալ գտնելով անհիմն, պատուիրել կոնսիստորիային կարգադրել, որ Սլդրեան քահանան մնայ Կախ-Աւանում, իսկ Արտաշէս Տէր Յովսէփեանի ձեռնադրութեան գործը կարճել։ 12 սեպտեմբ. թ. 463։

Սինոդը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. Թոյլ տալ Գանձակի գաւ. Զարդախլու գիւղի ծխականներին նորոգել իրենց եկեղեցին, ծախսելով եկեղեցական գումարներից 1500 ռուբլի։ 17 սեպտ., թ. 464։

Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի սեպտեմբերի 4-ի, № 1277 մակագիր պատուէրի, որոշեց. Թոյլ տալ էջմիածնապատկան կալուածների կառավարիչ Լ. Տէր Աւետիքեանին ստանալ Ա. Ղուկասեանի (Տփխիսում գտնուած) տունը կառավարելու համար իբրև վարձ տարեկան 300 ռուբլի նոյն տան եկամտից։ 19 սեպտեմբ. թ. 468։

Սինոդը՝ քննութեան առնելով Տփխիսի Թանդոյեան եկեղեցու միաբան Ներսէս աւ. քհնյ. Ղամազեանի մեղադրական գործը Աղէքսանդր Ադամեանի և Ովսաննա Խուբլարեանի ազգակցութեան 6-րդ աստիճանի չհաս պսակը կատարելու վերաբերմամբ, որոշեց. 1913 թ. փետր. 12-ի Բարձրագ. Հրովարտակի զօրութեամբ կարճել Ղամազեան քահանայի դէմ յարուցուած մեղադրական գործը, իսկ կատարուած պսակը, Մկրտիչ Ա. կաթող. 1902 թ. յունուարի 4-ի կոնդակի համաձայն, համարել վաւերական։ 19 սեպտ., թ. 471։

Սինոդը՝ Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն, որոշեց. Ուղարկել Մշոյ առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանին Պոպովեան վարժարանի շինու-

թեան գումարի — (6512 ռ. 50 կոպ.) մնացորդը — 2510 ռ. 60 կոպ. Պոպովեան վարժարանի շինութեանը ձեռնարկելու համար։ 19 սեպտ. թ. 470։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի սեպտեմ. 21-ի, թ. 1360 կոնդակը Կեսարիոյ առաջնորդ Ծ. Խոսրով ծ. վարդապետ Պեհրիկեանին և Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանդեանին եպիսկոպոս ձեռնադրելու վերաբերեալ, որոշեց. Սինոդի կազմի ներկայութեամբ երդուեցնել յիշեալ ծ. վարդապետներին Մ. Տաճարի Իջման ս. Սեղանի առաջ և երդմնագրերը ներկայացնել Նորին Սրբութեան։ 22 սեպտեմբ. թ. 477։

Սինոդը՝ Վեհափառ Կաթուղիկոսի մակագիր պատուէրի համաձայն, որոշեց. Պատուիրել Հայոց բոլոր թեմական առաջնորդներին գանձանակ շրջեցնել Հայոց եկեղեցիներում յօգուտ պատերազմում ջնասուածների, և ժողոված դրամը Սինոդի միջոցով ուղարկել Հանգանակիչ Ցանձնաժողովի նախագահ պայծառ. Կոմսուհի Վորոնցով-Դաշկովային։ 24 սեպտեմբ. թ. 486։

Սինոդը՝ Վեհափառ Կաթուղիկոսի սեպտեմբ. 23-ի, № 1373 կոնդակի համաձայն, որոշեց. Ընդունել ի շարս կուսակրօն հոգևորականաց Սեանի մենաստանի դպիր (քսանամեայ՝ ծառայութեամբ) Արշակ Յովհաննէսեանին և այդ մասին ամենախոնարհ յայտարարութեամբ տեղեկութիւն տալ Նորին Սրբութեան։ 29 սեպտեմբ. թ. 492։

Սինոդը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. Թոյլ տալ Ախալքալակի գաւառի Վաչիեան գիւղի ծխականներին նորոգել իրենց եկեղեցին, ծախսելով իրենց ունեցած 900 ռուբլին, և պարտաւորեցնելով ծխականներին լրացնել պակասորդ գումարը։ 29 սեպտեմբերի, թ. 493։